ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Սարչապետ համայնք, գ. Սարչապետ,
Հեռ. (077)867459 , sarchapet.lori@mta.gov.am

N 32-17
21 փետրվար 2017թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ եմ ներկայացնում Սարչապետ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 17-ի թիվ 05-Ն որոշումը /իր հավելվածով/:

Առդիր՝ 2 էջ:

Համայնքի ղեկավար՝ **Բորիս Բարոյան**

Կատ.՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N-05-Ն

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով '

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Սարչապետ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի :
2. Հաստատել 2016 թվականի Սարչապետ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ
3. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
4. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ
5. ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ
6. ՄԽՈՅԱՆ ՍԵՅՐԱՆ
7. ՏՈՄԵՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2016 թվականին նախատեսված ծրագրերն են.

- Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում և խճապատում
- Աջակցել բնակչության շրջանում հակահամաճարակային և կարանտին միջոցառումների կազմակերպումը
- Աջակցել անասնաբուժական ծառայությանը՝ կենդանիների հիվանդությունների կանխման նպատակով միջոցառումների իրագործմանը
- Հնարավորության չափով աջակցություն ցուցաբերել հաշմանդամների, կերակրողներին կորցրած ընտանիքների, պատերազմի վետերանների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ
- Պարզ տիպի սպորտային հրապարակի կառուցում, մարզասարքավորումների և մարզահագուստի ձեռքբերում
- Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում

Համայնքի քառամյա զարգացման ծրագրով նախատեսված 2016 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Բարեկարգվել են ներհամայնքային ճանապարհները, կամուրջները, կանաչապատվել է համայնքի հրապարակը, կազմակերպվել և աջակցություն է ցուցաբերվել անասնաբուժական ծառայությունների մատուցմանը, տրամադրվել է սոցիալական օգնություն համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, նորածին երեխաների ծնողներին տրամադրվել է միանվագ դրամական պարգևատրում, համայնքի մանկապարտեզին տրամադրվել է դրամաշնորհ, անապահով ուսանողների համար փոխանցվել է ուսման վարձ, կազմակերպվել է տարբեր միջոցառումներ, իրագործվել է աղբահանության աշխատանքները, փողոցների գիշերային լուսավորությունը, իրագործվել է մշակույթի տան մասնակի ջեռուցումը, տեղադրվել են դռներ և պատուհաններ, ձեռք է բերվել գրեյդեր, համայնքապետարանի համար՝ գույք և տեխնիկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ